ԱՌԷՆ ԱԲԵՂԱ ՃԵՊԵՃՅԱՆ
(ավազանի անունը՝ Առէն)

Ծնվել է 1966 թ. Դեթրոյթում (ԱՄՆ):

1980-1984 թթ. սովորել է Լոնմեդոյի հանրակրթական դպրոցում:

1984-1988 թթ. սովորել է Ս. Թովմասի անվան կաթոլիկ համալսարանում:

1989-1990 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1990թ. հունիսի 24-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1990-1994 թթ. սովորել է Ս. Ներսես ընծայարանում՝ միաժամանակ ուսումը շարունակելով Նյու Յորքի Ս. Վլադիմիր ճեմարանում: Ուսումնառության վերջում ստացել է աստվածաբանության մագիստրոսի աստիճան:

Այս ընթացքում Բարեշնորհ Առէն սարկավագ Ճեպեճյանը մասնակցել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Ժողովի կողմից հրավիրված մի շարք ժողովների:

1994-1995 թթ. գրաբարի և ծիսագիտության մեջ հմտանալու համար մեկնել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք՝ աշակերտելով Տ. Նորայր արքեպս. Պողարյանին:

1996-1998 թթ. ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի օրհնությամբ ստանձնել է թեմի «Հայ Եկեղեցու երիտասարդաց միության» գործադիր տնօրենի պարտականությունները:

1998-2004 թթ. իր հոգևոր ծառայությունն է բերել Չիկագոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

1999 թ. որպես Արևելյան թեմի ընտրյալ պատգամավոր սեպտեմբեր ամսին մասնակցել է Ազգային-եկեղեցական ժողովին:

2004 թ. ապրիլի 25-ին, ձեռամբ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի, Նյու Յորքի առաջնորդանիստ Ս. Վարդան Մայր տաճարում ձեռադրվել է կուսակրոն քահանա: Ձեռնադրությունից անմիջապես հետո ժամանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ի նշան կուսակրոնության ուխտի ստացել է վեղար:

Այժմ ԱՄՆ Արևելյան թեմի Միջին Արևմուտքի թեմական ճամբարի տնօրենն է: